

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2016թ-ի մայիս ամսվա կատարված աշխատանքների

Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 14 ծառ, որոնց համար կազմվել է 7 անտառոչափստման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Իրականացվել են բնաշիվային եղանակով անտառի վերականգնման, աջակցման աշխատանքներ ընդամենը 18 հա: Ըստ մասնաճյուղերի՝ <<Դիլիջան տեղամաս>> մ/ճ-ում 5 հա, <<Շամախյան տեղամաս>> մ/ճ-ում՝ 3 հա, <<Գոշ տեղամաս>> մ/ճ-ում՝ 5հա և <<Աղավնավանք տեղամաս>> մասնաճյուղում՝ 5 հա: Ավարտվել են 2016թ-ի գարնանային հերթական ստուգողական ստուգումները, արդյունքներն ամփոփվել են և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալություն:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել են վայրի պտղատուների և հիմնական ծառատեսակների ֆենոլոգիական ուսումնասիրություններ, լորենի ծառատեսակի ուսումնասիրություն, <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում գտնվող Պարզ լճի՝ որպես առանձին էկոհամակարգի, ուսումնասիրության շարունակական աշխատանքներ:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակցի կողմից կատարվել են շրջայցեր E- 1՝ Դիլիջան-Մաթոսավանք և E-2՝ Դիլիջան-Ջուխտակ վանքեր-Մատուռ էկոթրթուղիներում: Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհի հարակից տարածքի տաղավարների մոտ տեղադրվել են աղբամաններ:

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անց են կացվել մրցույթներ՝ հրազենային ատրճանակների և աշխատակիցների արտահագուստի ձեռք բերման համար: Կնքվել են համապատասխան պայմանագրերը: